ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

ՎԱՐԿ 5398-ԱՄ

ՆՈՐ ՆՈՐՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝

Գ. Նազարյան – Բնապահպանության գծով մասնագետ

Գ. Հակոբյան – Մոնիթորինգի, գնահատման և սոցիալական երաշխիքների ապահովման մասնագետ

ՀՈՒՆԻՍ 2023

ՄԱՍ Ա. ԾՐԱԳՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ			
Երկիրը	Հայաստանի Հանրապետություն		
Ծրագրի անվանումը	«Սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագիր» Երևան քաղաքի Նոր Նորքի միասնական սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի հիմնանորոգում		
Շինարարական աշխատանքների շրջանակը	Շինարարական աշխատանքների անցկացման վայրում իրականացվելու են հետևյալ գործողությունները՝ քանդման աշխատանքներ, ներքին ինժեներական ցանցերի կառուցում, դռների տեղադրում, արտաքին դռների և պատուհանների տեղադրում, սեյսմակայնության բարձրացման նպատակով տանիքի և միջնորմերի քանդում, միջհարկային ծածկերի ամրացում բետոնացումով և տանիքի ու միջնորմերի վերակառուցում, ինչպես նաև ներքին պատերի և առաստաղների հարդարում, ներքին ենթակառուցվածքների մոնտաժ, արտաքին մուտքի թեքահարթակի կառուցում և աստիճանների վերակառուցում, վերգետնյա արտաքին պատերի հարդարում և ջերմամեկուսացում, մասնաշենքի շուրջ կանոնակարգված ջրահեռացմամբ սալվածքի կառուցում (Հավելված 3): 2 հարկանի շենքի 1-ին հարկը (356.4 քմ) և 2-րդ հարկը (361.3 քմ) ամբողջությամբ (717.7 քմ) հատկացվել է ՄՍԾՏԿ-ի հիմնման համար (Հավելված 1): Առկա շինության տեխնիկական վիճակը և հիմնանորոգման հնարավորությունը ենթարկվել են տեխնիկական հետազննության: Ելնելով հետազննության արդյունքներից՝ մասնաշենքի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար, իսկ հիմնանորոգում և արդիականացման աշխատանքների իրականացումը՝ տեխնիկապես հնարավոր՝ շենքի ամրացման հանձնարարականների կատարման պայմանով:		
Ինստիտուցիոնալ կարգավորումներ (ելակետային միջոցառումներ) (Համաշխարհային Բանկ)	Աշխատանքները կատարող թիմի ղեկավար՝ Լուսիա Սոլբես Կաստրո	Անվտանգության մասնագետներ՝ Դարեջան Կապանաձե, Լուսինե Գևորգյան, Դավիդ Ջիջելավա, Սոնյա Մսրյան	
Աշխատանքների իրականացման կարգավորումները (ՀՀ)	Իրականացնող մարմին՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Աշխատանքները վերահսկող անձինք՝ Գևորգ Նազարյան, Գայանե Հակոբյան, խորհրդատուներ, ԱՍՀՆ	Կապալառու՝
ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ			
Հաստատության	Երևան քաղաքի Նոր Նորքի և Ավանի միասնական սոցիալական		

անվանումը	ծառայությունների տարածքային կենտրոն
Հաստատության հասցեն և այն տարածքը, որը պետք է վերանորոգվի	Երևան, Նոր Նորք վարչական շրջան, Մոլդովական փողոց 35/22 շենքի (N133 դպրոցի թիվ 7 մասնաշենքի) 1-ին և 2-րդ հարկերի 717.7 ք.մ. տարածքը: Շենքը հասարակական նշանակության է, իսկ տարածքը ընդհանուր օգտագործման պետական սեփականության հողամաս է: Անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը – ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27042021-01-0237, տրված 27.04.2021թ. (Հավելված 2): ՀՀ կառավարության 26.11.2020թ. թիվ 1856-Ա որոշման և 02.04.2021թ. հանձնման-ընդունման ակտի հիմքով գույքն ամրացված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Վկայականը սահմանում է ՀՀ ԱՍՀՆ սեփականության իրավունքները Նոր Նորք, Մոլդովական փողոց 35 հասցեում դպրոցի մասնաշենք 7-ի 717.7 քմ մակերեսով հասարակական տարածքի նկատմամբ:
Հողի սեփականատերը Հողի օգտագործողը (պաշտոնական/ոչ պաշտոնական)	ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27042021-01-0237-ի համաձայն՝ դպրոցի զբաղեցրած 2.0376 հա հողատարածքի սեփականատերը Հայաստանի Հանրապետությունն է: Հողատարածքի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման (Հավելված 2): Հատկացված տարածքը բնակելի չէ, հետևաբար մարդկանց ֆիզիկական և տնտեսական վերաբնակեցման/տեղահանման խնդիր չի առաջանա:
Շինարարական աշխատանքների անցկացման վայրի շրջակա առարկայական և բնական միջավայրը	Միասնական սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի համար հատկացված շինությունը գտնվում է Նոր Նորք վարչական շրջանի բանուկ մասում, շրջակայքում կան խանութներ, բնակելի շենքեր և հասարակական կառույցների օբյեկտներ: Ճանապարհը դեպի կենտրոն ասֆալտապատ է, տարածքում **կան** շինարարությանը խոչընդոտող ծառեր և թփեր: Կապալառուն պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ծառերը պաշտպանելու համար և կամ դիմել Երևանի քաղաքապետարան՝ հեռացման մասին թույլտվություն ստանալու համար: Նախագծային փաստաթղթերը տարածքից ծառերի հեռացում չեն ենթադրում: ՄՄԾՏԿ-ի արտաքին էլեկտրաէներգիայի, ջրի մատակարարումը և կեղտաջրերի հեռացումը կատարվում է համայնքային մակարդակում, մինչդեռ ներքին ենթակառուցվածքները լիովին փոխարինվելու են: Շինարարական աշխատանքների ընթացքը չի խանգարի հարակից բնակելի տների բնակիչների առօրյա կյանքին, մոտակա խանութների և այլ կառույցների աշխատանքներին, ինչպես նաև շինարակական աշխատանքները չեն խոչընդոտի հանրային երթևեկին: ՄՄԾՏԿ-ին հարող տարածքում հնարավոր է կայանել շինարարական փոխադրամիջոցներ, ինչպես նաև հնարավոր է

	ստեղծել ժամանակավոր պահեստ (օրինակ՝ շենքի նկուղում)՝ շինարարական նյութերի և շինարարական աղբի համար: Շինարարական աշխատանքները սկսման պահից կընթանան շուրջ 6 ամիս (հստակ ժամկետը կսահմանվի շին.թույլտվությամբ): Ծրագրի բնապահպանության գծով և սոցիալական երաշխիքների մասնագետները այցելել են տարածք և իրականացրել են նախնական հետազննություն:
Գտնվելու վայրը և հեռավորությունը նյութերի մատակարարման՝ հատկապես՝ ագրեգատների, ջրի, քարերի մատակարարման տեսանկյունից:	Անհրաժեշտ ագրեգատները և շինարարական այլ նյութերը գնվելու են մոտակա վաճառասրահներից կամ մեծածախ առևտրի կենտրոններից: Շինարարության համար անհրաժեշտ ջուրը հասանելի է շենքի ներսում, որը մատակարարվում է Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից:
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ	
Ներպետական և տեղական օրենսդրություն, ինչպես նաև թույլտվություններ, որոնք առնչվում են ծրագրի գործողություններին:	Ներքոշարադրյալ ՀՀ օրենսդրությունը սահմանում է ծրագրի գործողություններին առնչվող իրավական դաշտը. - **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-121, ընդ. 11.10.1994թ.)** Հոդված 11, մաս 2՝ «2. Շենքերի և շինությունների կառուցման (վերակառուցման, վերականգնման, քանդման, հիմնական և ընթացիկ նորոգման) աշխատանքների ընթացքում փոշու արտանետումների շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով շինարարություն, ինչպես նաև փոշու արտանետման հետ կապված աշխատանքներ կատարող ֆիզիկական (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող) և իրավաբանական անձինք դրանք իրականացնելու ընթացքում պարտավոր են՝ 1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով. 2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ. 3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով. 4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. 5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ. 6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով. 7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար

	հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:»: - **«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքը (2004)** *Հոդված 6, մաս 2՝* «2. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբ առաջացնողները ազատվում են աղբահանության վճարից, եթե նշված աղբը փոխադրվում և տեղադրվում է սեփական միջոցներով՝ սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված թույլտվության հիման վրա կամ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձանց հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա:» *Հոդված 8, մաս 3-5՝* «3. Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, համայնքի ավագանու սահմանած պահանջներին համապատասխան, կարող է իրականացնել շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքումը և փոխադրումը սույն հոդվածով նախատեսված՝ աղբի հավաքման և փոխադրման թույլտվության հիման վրա: 4. Աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ կարող են տրամադրվել նաև շինարարական և խոշոր եզրաչափի աղբի աղբահանության վճար վճարողներին՝ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար: 5. Աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը տրամադրում է համայնքի ղեկավարը համայնքի ավագանու հաստատած պայմաններով և կարգով:» *Հետևապես, շինարար կազմակերպությունը պետք է դիմի և ստանա համայնքից (Երևանի քաղաքապետարանից) թույլտվություն՝ իր ուժերով շինարարական աղբը հավաքելու և սահմանված վայր տեղափոխելու վերաբերյալ, կամ պետք է կնքի պայմանագիր համապատասխան թույլտվություն ունեցող կազմակերպության հետ:* - **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)** Օրենքը սահմանում է այն գործունեության տեսակները, որոնք ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և բնապահպանական փորձաքննության: *Գործող օրենքի համաձայն՝ Նոր Նորքի ՄՄՇՏԿ-ի հիմնանորոգման աշխատանքներն ենթակա չեն բնապահպանական փորձաքննության (կառուցապատման մակերեսը 1500քմ-ից պակաս է):* - **Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրք (2001թ.)** *Ինչպես սույն օրենքի, այնպես էլ ՀԲ Գործառնական քաղաքականություններ/Բանկային ընթացակարգերի (ԳՔ/ԲԸ) 4.12 կետի համաձայն Նոր Նորք ՄՄՇՏԿ-ի հիմնանորոգում աշխատանքները վերաբնակեցման և տարհանման խնդիրներ առաջ չեն բերի:* *Հոդված 36, մաս 5 համաձայն հողի բերրի շերտը հանվում և օգտագործվում է պակաս արդյունավետ հողերի բարելավման համար: Այդուհանդերձ, հողային աշխատանքների իրականացում*

	չի նախատեսվում, հետևապես հողերի պահպանության առումով կիրառելի դրույթներ չկան: - **«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)** Օրենքը սահմանում է ՀՀ-ում քաղաքաշինության սկզբունքները, կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները: *Սույն օրենքի համաձայն՝ շինության հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար պահանջվում է շինարարության թույլտվություն:* - **«Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. N405-Ն որոշում** *Սույն որոշման կարգով սահմանվում են Երևան քաղաքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեության բնագավառում ի լրումն քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված գործող նորմերի իրականացման ենթակա հետևյալ լրացուցիչ պայմանները (Կարգի մաս 6)՝* *1) ճարտարապետաշինարարական նախագծում կառուցապատվող օբյեկտի շինարարական հրապարակի կազմակերպման ձևի ու պայմանների ներառումը,* *2) շինարարական աշխատանքներն սկսելուց ոչ ավելի վաղ, քան մեկ ամիս առաջ կառուցապատվող օբյեկտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցված՝ ճարտարապետաշինարարական նախագծով նախատեսված շինարարական հրապարակի կազմակերպումը,* *3) կառուցապատվող օբյեկտին հարող տարածքում կամ դրան կից ճանապարհային երթևեկության մասնակիցների, ինչպես նաև այլ անձանց անվտանգության, իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով անհրաժեշտ իրազեկումն ու պայմանների ապահովումը,* *4) կառուցապատվող օբյեկտի շինարարական հրապարակից դուրս ընդհանուր օգտագործման տարածքների աղտոտման ու աղբի կուտակումների բացառումը,* *5) կառուցապատվող օբյեկտի շինարարական հրապարակում և հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում առկա ծառերի, թփերի և կանաչ տարածքների (կանաչ տնկարկներ, բուսածածկ տարածքներ, կանաչ տնկարկների կամ բուսածածկի համար նախատեսված հողաշերտեր) պաշտպանության և դրանց վրա շինարարական աշխատանքների ազդեցության նվազեցման միջոցառումների կազմակերպում:*
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ	
Ե՞րբ և որտե՞ղ են անցկացվելու հանրային քննարկումները.	Սույն ԲՍԿԾ նախագիծը ՀԲ կողմից հաստատվելուց հետո կտեղադրվի ԱՍՀՆ ինտերնետային կայքում (www.mlsa.am) հայերեն և անգլերեն լեզուներով: Սույն ԲՍԿԾ-ի վերաբերյալ հանրային քննարկումը կհայտարարվի տեղացի շահառուների համար հասանելի լրատվամիջոցներով և կկայանա ԲՍԿԾ-ն կայքում տեղադրելուց հետո: Նախագծված աշխատանքների վերաբերյալ կարճ

	տեղեկատվությունը, ինչպես նաև կապալառուի կոնտակտային տեղեկատվությունը՝ հարցերի և դիտողությունների դեպքում՝ հասանելի կլինի շինարարական աշխատանքների անցկացման վայրում և/կամ դրա անմիջական մոտակայքում (Հավելված 4): Շինարարության ընթացքում շինարարական տարածքի մոտ կփակցվեն իրազեկման վահանակներ և տեղեկատվական տախտակ՝ բողոքների և առաջարկությունների համար:
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ	
Հավելված 1. Շինարարական քարտեզ/լուսանկարներ Հավելված 2. Սեփականության վկայական Հավելված 3. Շենքի տեխնիկական վիճակի և վնասվածության եզրակացություն Հավելված 4. Հանրային քննարկման արձանագրություն (կկցվի ավելի ուշ) Հավելված 5. Նախագծային թույլտվություն Հավելված 6. Շին. թույլտվություն Հավելված 7. Բողոքների գրանցամատյան	

ՄԱՍ Բ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ/ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆ			
	Գործողությունը/Խնդիրը	**Կարգավիճակը**	**Սկսված գործողությունը**
Վերանորոգման աշխատանքներում ընդգրկված կլինի՞ հետևյալ գործողություններից որևէ մեկը:	Ա. Շենքի վերանորոգում	[×] Այո [ ] Ոչ	Եթե Այո, տե՛ս Բաժին Ա ներքևում
	Բ. Նոր շինարարություն	[ ] Այո [×] Ոչ	Եթե Այո, տե՛ս Բաժին Ա ներքևում
	Գ. Կեղտաջրերի մաքրման առանձին համակարգ	[ ] Այո [×] Ոչ	Եթե Այո, տե՛ս Բաժին Բ ներքևում
	Դ. Պատմական նշանակություն ունեցող շենքեր և թաղամասեր	[ ] Այո [×] Ոչ	Եթե Այո, տե՛ս Բաժին Գ ներքևում
	Ե. Հողի ձեռք բերում[1]	[ ] Այո [×] Ոչ	Եթե Այո, տե՛ս Բաժին Դ ներքևում
	Զ. Վտանգավոր կամ թունավոր նյութեր[2]	[ ] Այո [×] Ոչ	Եթե Այո, տե՛ս Բաժին Ե ներքևում
	Է. Ազդեցությունը անտառների և/կամ պահպանվող տարածքների վրա	[ ] Այո [×] Ոչ	Եթե Այո, տե՛ս Բաժին Զ ներքևում
	Ը. Բժշկական թափոնների օգտագործում և կառավարում	[ ] Այո [×] Ոչ	Եթե Այո, տե՛ս Բաժին Է ներքևում
	Թ. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	[×] Այո [ ] Ոչ	Եթե Այո, տե՛ս Բաժին Ը ներքևում
	Ժ. Սոցիալական ռիսկ	[×] Այո [ ] Ոչ	Եթե Այո, տե՛ս Բաժին Թ ներքևում

[1] Հողի ձեռք բերումը ենթադրում է մարդկանց տեղահանում, ապրուստի միջոցների փոփոխություն, մասնավոր սեփականության հանդեպ ոտնձգություն: Սա վերաբերվում է այն հողին, որը գնվում կամ փոխանցվում է և առնչվում է այն անձանց շահերին, ովքեր բնակվում և/կամ ինքնակամ բնակություն են հաստատում կամ ձեռներեցությամբ են զբաղվում (կրպակներ) այն հողի վրա, որը ձեռք է բերվում:

[2] Թունավոր/վտանգավոր նյութերը ներառում են, սակայն չեն սահմանափակվում՝ ասբեստով, թունավոր ներկերով, վնասաբեր լուծույթներով, կապար պարունակող ներկը մաքրող նյութերով և այլն:

ՄԱՍ Գ. ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	ՉԱՓՈՐՈՇԻՉ	ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՑԱՆԿԸ
Ընդհանուր պայմանները	Ծանուցումը և աշխատողների անվտանգությունը	**ա.** Տեղի շինարարական և բնապահպանական տեսչությունները և հանրությունը տեղեկացված են նախատեսվող շինարարական աշխատանքների մասին: **բ.** Հանրությունը գործունեության մասին տեղեկացվել է հանրային լսումների և ԶԼՄ-ների հաղորդագրությունների, ինչպես նաև հանրության համար հասանելի տեղերում (ներառյալ՝ շինարարական աշխատանքների անցկացման վայրում) փակցված գործունեության մասին համապատասխան ծանուցագրերի միջոցով: **գ.** Շինարարական և/կամ հիմնանորոգում աշխատանքների համար օրենքով պահանջվող բոլոր թույլտվություններն առկա են: **դ.** Կապալառուն պարտավորվում է բոլոր աշխատանքներն իրականացնել անվտանգ և համակարգված կերպով՝ նվազեցնելով բացասական ներգործությունը հարևանու-թյամբ բնակվող բնակիչների և շրջակա միջավայրի վրա: **ե.** Աշխատողների անհատական պաշտպանիչ հանդերձանքը պետք է համապատասխանի միջազգային լավագույն փորձով հաստատված չափանիշներին (աշխատողները միշտ պետք է կրեն շինարարական սաղավարտ, անհրաժեշտության դեպքում՝ դիմակներ և անվտանգության ակնոցներ, անվտանգության կախագոտիներ, ինչպես նաև պաշտպանիչ ճտքավոր կոշիկներ): **զ.** Համապատասխան նշումները շինարարական հրապարակների վերաբերյալ կիրազեկեն աշխատողներին հիմնական կանոնների և կարգավորումների մասին, որոնց նրանք պարտավոր են հետևել:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	ՉԱՓՈՐՈՇԻՉ	ՉԵՋՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՑԱՆԿԸ
Ա. Ընդհանուր վերանորոգման և/կամ շինարարական աշխատանքները	Մթնոլորտային օդի պահպանություն	**ա.** Ներքին պատերը քանդելու ընթացքում առաջին հարկից վերև պետք է օգտվել աղբատարից: **բ.** Պատերը քանդելուց առաջացած շինարարական աղբը պետք է պահվի վերահսկվող վայրում և ջուր ցանվի վրան՝ նվազեցնելու շինարարական աղբից առաջացող փոշին: **գ.** Պատերի մեջ անցքեր անելիս/պատը քանդելիս՝ առաջացող փոշին պետք է վերացնել՝ շարունակաբար ջուր ցանելով և/կամ տեղադրելով փոշին պահող թաղանթներ: **դ.** Մոտակայքի շրջակա միջավայրը (մայթեր, փողոցներ) պետք է ազատվեն շինարարական աղբից՝ նվազեցնելու համար փոշու կուտակումը: **ե.** Շինարարական հրապարակում չպետք է թույլ տալ շինարարական նյութերի կամ աղբի բացօթյա այրում: **զ.** Շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ: **է.** Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով. **ը.** Օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. **թ.** Հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ. **ժ.** Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով. **ի.** Շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:
	Աղմուկի մակարդակի նվազեցում	**ա.** Շինարարությունից առաջացող աղմուկը սահմանափակվելու է անթույլատրելի ժամերին. տվյալ դրույթը սահմանված է շինարարության թույլտվությամբ: **բ.** Շինարարական աշխատանքների ընթացքում գեներատորների, օդաճնշիչների և այլ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	ՉԱՓՈՐՈՇԻՉ	ՉԵՋՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՑԱՆԿԸ
		մեխանիկական սարքերի շարժիչների ծածկերը պետք է փակված լինեն, և նման սարքավորումները պետք է տեղակայվեն բնակավայրերից հնարավորին չափ հեռու: **գ.** շինարարական աշխատանքներում ներգրավել աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում: **դ.** պարբերաար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները:
	Ջրային ռեսուրսների պահպանություն	**ա.** Շին հրապարակում կսահմանվեն էրոզիայի և նստվածքների վերահսկման համապատասխան միջոցառումներ, ինչպիսիք են, օրինակ. խոտի ցողուններ և/կամ տիղմային ցանկապատեր՝ նստվածքի տեղաշարժը տարածքից դուրս կանխելու նպատակով; **բ.** ջրցանիչների ծավալները պետք է հաշվարկվեն մակերևութային հոսքերը կանխելու և փոշու մաքրման նպատակով բավարար ջուր ապահովելու համար:
	Հողային աշխատանքներ	**ա.** Շինարարական նյութերը կտեղադրվեն անթափանց կարծր մակերեսի վրա, **բ.** Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվեն ժամանակակից տեխնիկական միջոցներ: **գ.** Տրանսպորտային միջոցների և մեքենաների սպասարկումը և վառելիքի լիցքավորումը կիրականացվեն սահմանված տարածքում՝ անթափանց մակերևույթի վրա:
	Թափոնների կառավարումը	**ա.** Թափոնների հավաքումը և հեռացումը մայթերի վրայից և շինարարական հրապարակից կիրականացվի բոլոր տեսակի թափոնների համար, որոնք առաջանում են շինությունների քանդման և շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում: **բ** . Հանքային հիմքի վրա շինարարական և քանդման թափոնները պետք է առանձնացվեն ընդհանուր սովորական, օրգանական, լուծույթների հիմքի վրա և քիմիական թափոններից՝ հենց շինարարական հրապարակում և պետք է պահեստավորվեն համապատասխան տարաներում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	ՉԱՓՈՐՈՇԻՉ	ՉԵՋՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՑԱՆԿԸ
		գ. Շինարարական թափոնները կհավաքվեն և կհեռացվեն պատշաճ ձևով՝ Երևանի քաղաքապետի 2016թ-ի հունիսի 30-ի թիվ 2391-Ա որոշման համաձայն: **դ.** Աղբահանման վերաբերյալ նշումները կպապանվեն՝ որպես թափոնների պատշաճ կառավարման ապացույց: **ե.** Հնարավորության դեպքում կապալառուն կրկին կօգտագործի և կվերամշակի օգտագործման և վերամշակման համար հարմար և կենսունակ նյութերը (բացի ասբեստից):
Ը. Հետիոտնի և երթևեկության անվտանգություն	Ուղղակի և անուղղակի վտանգ, որը կարող է հասցվել հանրային երթևեկությանը և հետիոտներին շինարարական աշխատանքների ընթացքում:	**ա.** Ազգային օրենսդրության կարգավորումների համաձայն՝ կապալառուն երաշխավորում է շինարարական հրապարակում կատարվող աշխատանքների անվտանգությունը և շինարարությանն առնչվող երթևեկության կանոնակարգումը: Այդ գործողությունների մեջ ներառվում են, սակայն չեն սահմանափակվում՝ • նախազգուշացման և այլ նշանների տեղադրումը, արգելապատնեշների տեղադրումը և երթևեկության ուղղության փոփոխումը. շինարարական աշխատանքների անցկացման վայրը տեսանելի կլինի և հանրությունը կիրազեկվի իրական վտանգների մասին. • երթևեկության կարգավորման համակարգը և աշխատողների վերապատրաստումը, հատկապես՝ մուտքը դեպի շինարարական հրապարակ և մոտակայքում առկա ծանրաբեռնված երթևեկությունը. հետիոտների համար անվտանգ անցումների և ճանապարհահատումների կազմակերպում, այն մասում, որտեղ անցկացվում են շինարարական աշխատանքները: • Շինարարների աշխատանքային ժա-մերի հարմարեցումը տեղի երթևեկու-թյանը, ինչպես օրինակ՝ շինարարական մեծ փոխադրամիջոցների տեղաշարժը երթևեկության լարված ժամերին. • Երթևեկության ակտիվ կարգավորում վերապատրաստված և նշմարելի անձնակազմի կողմից՝ հանրության համար անվտանգ և հարմարավետ ճանապարհահատում կազմակերպելու համար. • Գրասենյակային տարածքներ, խանութներ և բնակելի շենքեր ներգործելու նպատակով

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	ՉԱՓՈՐՈՇԻՉ	ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՑԱՆԿԸ
		անվտանգ և անարգել մուտքի ապահովում հանրության համար, եթե վերոհիշյալ տարածքները բաց են լինելու հանրության դիմաց:
Սոցիալական ռիսկ	<u>**Հանրային հարաբերությունների կառավարում**</u>	(ա) Խորհրդակցել տեղի համայնքի հետ՝ հնարավոր կոնֆլիկտները արտաքին աշխատուժի և տեղի բնակչության միջև բացահայտելու և ակտիվորեն կառավարելու համար: (բ) Իրազեկել տեղի համայնքին սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ռիսկերի մասին, որոնք կապված են արտաքին աշխատուժի առկայության հետ և ընդգրկել տեղի համայնքներին իրազեկման միջոցառումներում: գ) բնակչությանը, ըստ անհրաժեշտության, տեղեկացնել շինարարության և աշխատանքների ժամանակացույցի, կոմունալ ծառայությունների ընդհատումների, երթևեկության շրջանցման երթուղիների, տրանսպորտի ժամանակավոր երթուղիների, պայթեցման և քանդման վտանգների մասին: դ) Սահմանափակել շինարարական աշխատանքները գիշերային ժամերին: Անհրաժեշտության դեպքում համոզվել, որ գիշերային աշխատանքը մանրակրկիտ պլանավորված է, և համայնքը պատշաճ կերպով տեղեկացված է դրա մասին, որպեսզի նրանք կարողանան անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել: ե) կոմունալ ծառայությունների (ներառյալ ջուրը, էլեկտրաէներգիան, հեռախոսը, ավտոբուսի երթուղիները) ցանկացած ընդհատումից առնվազն հինգ օր առաջ տեղեկացնել համայնքին այդ մասին աշխատանքի վայրում, ավտոբուսի կանգառներում և բնակության վայրերում փակցված հայտարարությունների միջոցով: (զ) Պատվիրատուի կողմից նախատեսված Բողոքների լուծման մեխանիզմի միջոցով հատկացված ժամկետներում և Կապալառուի պատասխանատվության շրջանակներում անդրադառնալ առաջացած մտահոգություններին: (է) Հնարավորության սահմաններում շին հրապարակները չպետք է տեղակայված լինեն տեղական համայնքներին մոտ: (ը) Աշխատավորների ճամբարների տեղակայումն ու շահագործումը պետք է իրականացվի հարևան համայնքների հետ խորհրդակցելով:
	<u>**Աշխատանքի կառավարում**</u>	(ա) Կապալառուն հնարավորության սահման-ներում աշխատանքներում ներգրավելու է աշխատողներ տեղական համայնքներից:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	ՉԱՓՈՐՈՇԻՉ	ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՑԱՆԿԸ
		Անհրաժեշտության դեպքում կազմակերպելու է ուսուցումներ աշխատողների հմտություն-ների զարգացման և տեղացիների մասնակ-ցությունը մեծացնելու համար: (բ) Կապալառուն աշխատանքային վայրում հատկացնելու է համապատասխան զուգա-րաններ (զուգարաններ և լվացվելու տարածք-ներ) տաք և սառը հոսող ջրի, օճառի և ձեռքի չորացման սարքերի համապատասխան պաշարներով: (գ) Կապալառուն կիրազեկի իր աշխատողներին տեղի բնակչության հետ ճիշտ հարաբերվելու վերաբերյալ, կստեղծի վարքագծի կանոններ՝ համահունչ միջազգային պրակտիկային:
	<u>Բողոքարկման լուծման մեխանիզմի կառավարում</u>	ԲԼՄ-ը սահմանում է բողոքարկման պաշտոնական ընթացակարգ, որը թույլ է տալիս անհատներին, համայնքներին և/կամ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին շինարարական գործողությունների ընթացքում ներկայացնել բողոքներ հնարավոր բացասական ազդեցությունների վերաբերյալ և պահանջել փոխհատուցում: Այդ նպատակով. (ա) Կապալառուի թիմում կապ հանդիսացող անձ է նշանակվում տեղի բնակչության հետ հաղորդակցվելու և հարցադրումներ/բողոքները գրանցելու համար. (բ) ԲԼՄ ստեղծվում և զովազդվում է տեղական մակարդակում: Կապալառուն տեղեկացվում է ստացված բանավոր և գրավոր բողոքները գրանցելու և ԾՀԳ-ին հայտնելու իր պատասխանատվության մասին: (գ) ԲԼՄ կոնտակտային տվյալները տեղա-դրվում են շինհրապարակում և տեղական համայնքի վարչական գրասենյակում: (դ) Կապալառուի կապ հանդիսացող անձը ստանում և գրանցում է բնակչության բողոքները ԲԼՄ մատյանում (***Հավելված 6***) և պարբերաբար հաղորդում է բողոքների մասին ԾՀԳ-ին: (ե) Բողոքարկման մեխանիզմը պարբերաբար կվերանայվի, կթարմացվի և կբարելավվի՝ ապահովելու մեխանիզմի արդյունավետությունը և համապատասխանությունը առկա իրավիճակին և համատեքստին: (զ) Ծրագրի բողոքարկման մեխանիզմի միջոցով ստացված կարծիքները և բողոքները կներկայացվեն և կներառվեն հաշվետվություններում:

ՄԱՍ Դ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ

Գործողությունը	Ի՞նչ (Չափորոշիչը մոնիտորինգի ենթակա՞ է)	Ո՞րտեղ (Չափորոշիչը մոնիտորինգի ենթակա՞ է)	Ի՞նչպես (Չափորոշիչը մոնիտորինգի ենթակա՞ է)	Ե՞րբ (Որոշել հաճախականությունը/ շարունակական) լինելը)	Ի՞նչու (Չափորոշիչը վերահսկվու՞մ է)	Ո՞վ (Պատասխանատու՞ է մոնիտորինգի համար)
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ						
Վերակառուցման համար անհրաժեշտ նյութերի ապահովում	Վերակառուցման համար անհրաժեշտ նյութերի գնում գրանցված մատակարարներից	Մատակարարների գրասենյակ կամ պահեստ	Նյութերի պիտակների և/կամ փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերի կնքման ընթացքում	Մարդկանց առողջության համար շինարարական նյութերի անվտանգ լինելու և հուսալի լինելու մասին հավաստիացում	ԱՍՀՆ Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություն
Շինարարական թափոնների առաջացում	- Շինարարական թափոնների ժամանակավոր պահեստավորումը դրա համար նախատեսված վայրում - Թափոնների ժամանակին հեռացումը դրա համար նախատեսված վայր	Աշխատանքների իրականացման վայր Թափոնների հեռացման համար նախատեսված վայր	Երևանի քաղաքապետարանի գրությունը թափոնների հեռացման վայր հատկացնելու վերաբերյալ, թափոնների հեռացման վայրի կառավրչի հետ կնքված պայմանագիրը Հսկողություն	Աշխատանքային ժամերին չզգուշացված ստուգումներ	- Տարածքի աղտոտման կանխում - Շինարարական հրապարակում շինարարական նյութերի թափթփված մասերի և քանդված պատերից առաջացած աղբի պատճառով դժբախտ պատահարների կանխում - Վերանորոգվող տարածքի էսթետիկ տեսքի պահպանում	ԱՍՀՆ Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություն
Կենցաղային թափոնների կուտակում	- շինհրապարակում աղբամանների տեղադրում - Համաձայնագիր քաղաքապետարանի հետ թափոնների կանոնավոր արտաբեռնման մասին:	Աշխատանքների իրականացման վայր	Հսկողություն	Աշխատանքային ժամերին չզգուշացված ստուգումներ	Խուսափել կենցաղային թափոններով աղտոտումից	ԱՍՀՆ Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություն
Շինարարական նյութերի և աղբի փոխադրումը,	- Փոխադրամիջոցների և սարքավորումների տեխնիկական վիճակը	- Շինարարական հրապարակ - Շինարարական	Շինարարական աշխատանքների անցկացման վայրին հարող	Ընտրովի հսկողություն՝ աշխատանքային	- Արտանետումներից հողի և օդի աղտոտման սահմանափակում	ԱՍՀՆ

Շինարարական մեքենաների տեղաշարժը	- Բեռնատար մեքենաների բեռը ծածկել անթափանց թաղանթով, - Շին հրապարակից դուրս գալուց լվանալ մեքենաների անվադողերը, - Փոխադրումների սահմանված երթուղու և ժամանակի պահպանում	նյութերի և թափոնների փոխադրման երթուղիներ	ճանապարհների հսկողություն երթուղու ուղղությամբ	ժամերին	- Տեղական համայնքներին պատճառվող անհարմարության՝ աղմուկի և վիբրացիայի սահմանափակում -Նվազեցնել երթևեկության խափանումը	Ճանապարհային ոստիկանություն
Շինարարական սարքավորումների պահպանում	- Մեքենաների և շին սարքավորումների լվացում շին. հրապարակից դուրս կամ բնական աղբյուրներից առավելագույն հեռավորության վրա գտնվող վայրում, - Շին. սարքավորումների վերալիցքավորում կամ յուղում շին. հրապարակից հեռու կամ նախապես որոշված, նախատեսված վայրում:	Շին հրապարակ	Միջոցառումների հսկողություն	Ընտրովի հսկողություն՝ աշխատանքային ժամերին	- Շին սարքավորումների՝ նավթային վառելիքով շահագործման հետևանքով ջրի և հողի աղտոտումից խուսափում Հրդեհի դեպքում դրա արագ տեղայնացում և ակնկալվող վնասի նվազեցում	ԱՍՀՆ Տեխ հսկող
Աշխատողների առողջությունը և անվտանգությունը	- Շինարարների աշխատանքային հագուստով և անհատական պաշտպանիչ հանդերձանքով ապահովում - Շինարարական սարքավորումների գործարկման և անհատական պաշտպանիչ հանդերձանքի օգտագործման	Շինարարական հրապարակ	Գոծողությունների հսկողություն	Աշխատանքների ողջ ժամանակահատվածը	Վնասվածքների և դժբախտ պատահարների հավանականության նվազեցում	ԱՍՀՆ Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություն

	կանոններին խիստ համապատասխանում - Շինարարական հպարակում հակահրդեհային համակարգի և բժշկական օգնության առկայություն - Աշխատանքային անվտանգության դասընթացների և հրահանգների գրառումների առկայություն					
Երթևեկությունը և ճանապարհների անվտանգությունը	- Երթևեկությունը կանոնակարգող և նախազգուշացնող նշանների առկայություն - Շինհրապարակի գծանշում/ցանկապատում, բոլոր աշխատանքների իրականացումը ցանկապատված հատվածի ներսում, - Շինանյութերի և կուտակված աղբի բացակայություն շինհրապարակի տարածքից դուրս	Շինարարական հրապարակի հարակից մասում	Տեսողական զննում	Շինարարական աշխատանքների ողջ ընթացքում	Որոշելու, թե արդյոք շինարարական աշխատանքերի հետևանքով չեն վնասվում ուղևորների/կամ հետիոտների շահերը Նվազագույնի հասցնել շինարարական աշխատանքների պատճառով հանրային երթևեկության և հետիոտնի ուղղակի կամ անուղղակի վտանգները.	ԱՍՀՆ Ճանապարհային ոստիկանություն
Շինհրապարակի բարեկարգում և կանաչապատում	Շինհրապարակի և ճանապարհների վերջնական մաքրում, տարածքի կանաչապատում ըստ անհրաժեշտության	Շինհրապարակ	Տեսողական զննում	Աշխատանքների ավարտական փուլ	Նվազեցնել շինարարական գործունեության պատճառով առաջ եկած բնապատկերի գեղագիտական արժեքի կորուստը	ԱՍՀՆ Երևանի քաղաքապետարան Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություն
Հանրային	Հետևյալ	Կապալառուի	Այցելությունների միջոցով	Շինարարական	Շինարարական	ԱՍՀՆ/

տեղեկատվություն և բողոքների լուծում	տեղեկատվությամբ հայտարարությունների տախտակը/վահանակը տեղադրված է շինհրապարակում՝ - Աշխատանքները իրականացնողի (կապալառու), պատվիրատուի (ԱՍՀՆ), աշխատանքները ֆինանսավորող ծրագրի (ՍՊՎԾ II) անվանումները, - Կոնտակտային տվյալներ/թեժ գիծ ԱՍՀՆ-ում՝ հարցերի և բողոքների դեպքում ԾԻԳ-ի հետ կապվելու համար: - ԲԼՄ առկա է և գործարկված	դաշտային գրասենյակ և շինարարական հրապարակ: Ինչպես նաև հարակից գործող հաստատությունների տեսանելի ու գլխավոր հատվածների մոտ	պարբերաբար ստուգել ԲԼՄ հայտարարությոնների վահանակը շինհրապարակում; ԲԼՄ գրանցամատյանի առկայության ստուգում, մուտքերի համապատասխանությունը և բողոքների քննարկման արդյունավետություն	աշխատանքներից առաջ և ընթացքում	հրապարակին կից բնակվող և աշխատող քաղաքացիների և շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցվելու, բողոքների գրանցման գործընթացի համար	Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություն
ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՓՈՒԼ						
Գործառնական թափոնների կառավարում	ՄՄԾՏԿ-ի գործառնությունների ընթացքում առաջացած կենցաղային աղբի համակարգված հավաքում - ՄՄԾՏԿ–ի կենցաղային աղբի հեռացման գործողությունների կարգավորում	ՄՄԾՏԿ-ի տարածք	Տարածքի հսկողություն	ՄՄԾՏԿ գործունեության ողջ ընթացքում	Սանիտարական անվտանգության և բարենպաստ պայմանների ապահովում ՄՄԾՏԿ-ի անձնակազմի համար	ՄՄԾՏԿ
Ներքին հաղորդակցության համակարգերի պահպանում	Էլեկտրական լարերի և խմելու ջրի/ կոյուղաջրերի խողովակների պահպանումը լավ գործառնական վիճակում	ՄՄԾՏԿ-ի տարածք	Տարածքի հսկողություն	ՄՄԾՏԿ գործունեության ողջ ընթացքում	Էլեկտրականությունից հասցվող ցնցումների, կարճ միացումների և խողովակների արտահոսքի վտանգի բացառում	ՄՄԾՏԿ
Բարեկարգված տարածք	Բարեկարգման կարիք ունեցող, ուղեհարթված, ամրացված, ջրահեռացված,	ՄՄԾՏԿ-ի տարածք	Տեսողական զննմամբ	ՄՄԾՏԿ գործունեության ողջ ընթացքում	Բարեկարգված տարածքը բարենպաստ սոցիալական	ՄՄԾՏԿ

	թեքահարթակով տարածք				ազդեցություն կունենա կենտրոն այցելող շահառուների վրա	
Արտակարգ իրավիճակների պատրաստություն	Հրդեհի տեղայնացման համակարգի առկայություն և արտակարգ իրավիճակների պահեստային համակարգ՝ կաթսայով ջեռուցման համակարգի խափանումների դեպքում	ՄՄԾՏԿ-ի տարածք	Պարբերական հսկողություն	ՄՄԾՏԿ գործունեության ողջ ընթացքում	Նվազեցնել ռիսկերը ՄՄԾՏԿ-ի անձնակազմի և այցելուների համար - Թույլ չտալ ՄՄԾՏԿ-ի աշխատանքի խափանումներ և անձնակազմի և այցելուների համար անհարմարությունների առաջացում	ՄՄԾՏԿ
Ջեռուցման և օդափոխության համակարգերի շահագործում և սպասարկում	Իրականացվում է ամբողջ ջեռուցման և օդափոխության համակարգերի կանոնավոր սպասարկում	ՄՄԾՏԿ-ի տարածք	Պարբերական հսկողություն	ՄՄԾՏԿ գործունեության ողջ ընթացքում	Ջեռուցման և անվտանգության համակարգերը պահել անվտանգ ու սարքին վիճակում	ՄՄԾՏԿ

Հավելված 1. Շինարարական քարտեզը/լուսանկարները



Նկար 1. 1-ին հարկի ինտերիերի ձևավորում



Նկար 2. 2-րդ հարկի ինտերիերի ձևավորում


Ռեածկի պրոֆիլավորված ցինկապատ
թիթեղ КП 25-0.50 մմ
3000
6000
6000
6000
6000
6000
33000
7
6
5
4
3
2
1


Ռեածկի պրոֆիլավորված ցինկապատ
թիթեղ КП 25-0.50 մմ

Old meat Supermarket
Hostel Moldovenesti
Google


Bagrevani St
Moldovenesti St
Old meat Supermarket
NOR NORK USSTC

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 27 ապրիլի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Նոր-Նորք Մոլդովական փողոց 35

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Երևանի քաղաքապետի 20.11.2002թ. թիվ 2216-Ա որոշում, Հաշվեկշռային արժեքի վերաբերյալ 26.11.2002թ. թիվ 12/01N 778 տեղեկանք, ՀՀ առաջադրանք՝ 05.11.2012թ.N 01/18-07/2-52481-1007, Շինարարության 28.11.2012թ. N 01/18-53651-1151 թույլտվություն,ՇՇ փաստագրման 11.12.2012թ. N 01/19-12/59274-389 ակտ, Գույքի հանձնման-ընդունման ակտ՝26.03.2021թ

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-008-0506-0280
Մակերեսի չափը (հա)՝ 2.0376
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 27042021-01-0237, գաղտնաբառ՝ 1HZYAMIF1MFU

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-008-0506-0280-001-001	Դպրոց մասնաշենք 1	6267.7 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	01-008-0506-0280-002	Արհեստանոց	217.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	01-008-0506-0280-003	Պահեստ	70.5 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	01-008-0506-0280-004	Կաթսայատուն	29 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	01-008-0506-0280-001-002	Դպրոց մասնաշենք 2	728.3 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	01-008-0506-0280-001-003	Դպրոց մասնաշենք 3	717.7 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7	01-008-0506-0280-001-004	Դպրոց մասնաշենք 4	689.3 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
8	01-008-0506-0280-001-005	Դպրոց մասնաշենք 5	725.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
9	01-008-0506-0280-001-006	Դպրոց մասնաշենք 6	1106.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
10	01-008-0506-0280-001-007	Դպրոց մասնաշենք 7	717.7 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Սույն վկայականը հանդիսանում է 06.02.2013թ. տրամադրված N 06022013-01-1901 վկայականի ուղղված տարբերակը:ՀՀ կառավարության 26.11.2020թ. N 1856-Ա որոշման և 02.04.2021թ. հանձնման-ընդունման ակտի հիմքով գույքն ամրացված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՆԻ ԱԲԳԱՐՅԱՆ
Ձբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 27042021-01-0237, գաղտնաբառ՝ 1HZYAMIF1MFU

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Հավելված 3. Շենքի տեխնիկական վիճակի և վնասվածության եզրակացություն

Նկ.1 Դպրոցի ուսումնական մասը

Նկ.2 Մասնաշենքի արտաքին տեսքը

Նկ.3 Մասնաշենքի ներսային վիճակը

Նկ.4 Պատերի ներսում առկա վնասվածքների տեսքը

Հավելված 4

ՆՈՐ ՆՈՐՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀՐԱՎԵՐ

2023թ. ……-ին ժամը 11:00-ին քաղաք Երևան Գայի պողոտա 19 հասցեում Նոր Նորք վարչական շրջանի ադմինիստրատիվ շենքում տեղի կունենան «Նոր Նորքի միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի հիմնանորոգում բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի» նախագծի քննարկման հանրային բաց լսումներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագրի համակարգման գրասենյակը (ՍՊՎԾ-II) հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու սույն ծրագրի նախագծի քննարկմանը:

Ձեր առաջարկություններն ու դիտողությունները կարող եք ուղարկել infospap@mlsa.am էլեկտրոնային հասցեով կամ ներկայացնել ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 361 սենյակ, ոչ ուշ քան ս/թ……:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության http://www.mlsa.am կայքում, ինչպես նաև ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 361 սենյակ հասցեում, հեռ: 010 54 16 89:

Հավելված 5. Նախագծային թույլտվություն

Հավելված 6. Շինարարական թույլտվություն

Հավելված 7. Բողոքների գրանցամատյան

ՀՀ	Բողոքի ընդունման ամսաթիվ	Բողոքարկողի անունը	Բողոքարկողի կոնտակտային տվյալները	Բողոքի բովանդակությունը համառոտ	Արձագանք /լուծում	Արձագանքման ամսաթիվը	Հետևողական լինելու հարցեր	Կոնտակտային անձ
1.								
2.								
3.								